ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 48-Լ

«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ «ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2020Թ. ՄԱՐՏԻ 25-Ի ԹԻՎ 418 ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն ստեղծելու մասին» համաձայնագրով հաստատված ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի կանոնադրության 8-րդ հոդվածի, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 14.03.2023թ.՝ «ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 270-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի վարչության հայկական կողմի հետևյալ կազմը՝

1) Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի վարչության հայկական կողմի համանախագահ՝ ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալ, փ/ծ գնդապետ Կամո Ցուցուլյան,

2) ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, փ/ծ գնդապետ Տիգրան Պետրոսյան,

3) ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ներկայացուցիչ՝ ՌԴ ԱԻ նախարարությունում, փ/ծ գնդապետ Արտակ Ղազարյան:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի վարչության հայկական կողմի կազմը հաստատելու մասին» 2020թ. մարտի 25-ի թիվ 418 հրամանը:

3. Հրամանը հայտարարել ՀՀ ՆԳՆ իրավասու ստորաբաժանումների ծառայողներին և աշխատողներին:

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

«16» հոկտեմբերի 2023թ.
ք.Երևան